ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N _____ -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԵՆՐԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ
ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Բաշինջաղյան փողոցի փակուղին անվանափոխել անվանի նկարիչ Հենրիկ Ոսկանյանի փողոց:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿ՝
Երևան քաղաքի ավագանու
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
խմբակցության անդամ ՄԱՐԿՈՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԵՆՐԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նկարիչ Հենրիկ Ոսկանյանը ապրել և ստեղծագործել է Աջափնյակ վարչական շրջանի Բաշինջաղյան փողոցի փակուղում և վայելել բնակիչների սերն ու հարգանքը: Վերջինս ստեղծագործել է ուրույն ոճով՝ ստեղծելով իր անհատական ձեռագիրը նկարչական արվեստի բնագավառում: Հ.Ոսկանյանի աշխատանքերը բարձր գնահատականի են արժանացել աշխարհի բազմաթիվ երկրների նախագահների կողմից: Նրա գեղեցիկ ստեղծագործությունները զարդարում են նաև գործող բազմաթիվ մշակութային օջախների և կառավարական շենքերի դահլիճները:

Տվյալ տարածքի բնակիչների ցանկությունն է, որ վերոհիշյալ փակուղին անվանափոխվի հայտնի և սիրված նկարչի անվամբ: Փակուղին անվանափոխելու մեկ այլ պատճառ հանդիսանում է այն, որ տեղի բնակիչների անձնագրերում հասցեները տարբեր կերպով են գրանցված, օրինակ՝Բաշինջաղյան նրբանցք, Բաշինջաղյան 1-ին նրբանցք, Բաշինջաղյան փակուղի: Այսպիսով, հստակ անվանակոչումը թույլ կտա նաև խուսափել այս խնդրից:

Բացի այդ Անաստասավանի բոլոր փողոցները՝ բացի վերը նշվածից անվանակոչված են:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ և՛ Հենրիկ Ոսկանյանը, և՛ Գևորգ Բաշինջաղյանը, ում անվամբ էլ կոչվում է Բաշինջաղյան փողոցը, անվանի նկարիչներ են, նպատակահարմար և տրամաբանական է փակուղու անվանափոխման հարցի դիտարկումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

Երևան քաղաքի ավագանու
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
խմբակցության անդամ ՄԱՐԿՈՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԵՆՐԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Հենրիկ Ոսկանյանի անվամբ փողոց անվանափոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԵՆՐԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Հենրիկ Ոսկանյանի անվամբ փողոց անվանափոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

Երևան քաղաքի ավագանու
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
խմբակցության անդամ ՄԱՐԿՈՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ